ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«25» օգոստոս 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Արմանուշ Բակունց
7. Մերի Մկրտչյան
8. Մարետա Հարությունյան
9. Կարինե Արզումանյան
10. Սերգեյ Ավանեսյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. 2022-2023 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմի հաստատում, նախագահի ընտրություն:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

3. 2021-2022 ուսումնական տարվա արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

4. 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, թեմատիկ պլանների, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող գրավոր աշխատանքների քանակն ու տեսակները:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդնում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմի հաստատման և նախագահի ընտրության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը առաջարկեց հաստատել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմը, հաշվի առնելով դրանում ընդգրկված առարկաների ուսուցիչներին, ինչպես նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի պաշտոնում առաջադրվել է «Քիմիա» առարկայի ուսուցչուհի, 2021-2022 ուսումնական տարում մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունցը: Զեկուցողն առաջարկեց Անուշ Դաջունցին 2022-2023 ուսումնական տարում նույնպես ընտրել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ:

*Արտահայտվեցին՝* Մ. Հարությունյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին ամփոփոխել թողնել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահին և 2022-2023 ուսումնական տարում նույնպես առաջարկեցին Անուշ Դաջունցի թեկնածությունը, հաշվի առնելով նաև վերջինիս կողմից նախորդ ուսումնական տարում իրականացրած աշխատանքները:

*Որոշեցին՝* Հաստատել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմը, ինչպես նաև նախագահ ընտրել Անուշ Դաջունցին:

*Լսեցին 3.* 2021-2022 ուսումնական տարվա արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները, դրանց կատարողականը, բացթողումները:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2021-2022 ուսումնական տարվա կատարողականը:

*Լսեցին 4.* 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվա վերջին նիստում ներկայացվել է բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը: Հիմք ընդունելով նախնական ժամաբաժանումը զեկուցողն առաջարկեց կատարել համապատասխան փոփոխությունները, թափուր մնացած դասաժամերը ժամանակավորապես տրամադրել համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչներին՝ մինչև մրցույթի կայանալը և հաստատել այն: Զեկուցողն առաջարկեց հաստատել դպրոցական բաղադրիչը: Առաջարկվեց մեկական դասաժամ տրամադրել 8-րդ և 9-րդ դասարաններում «Հանրահաշիվ» առարկային, իսկ 7-րդ դասարանում՝ երկրորդ կիսամյակում՝ «Քիմիա» առարկային:

*Արտահայտվեցին՝* Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նպատակահարմար է այդ մեկ դասաժամն 9-րդ դասարանում տրամադրել երկրորդ կիսամյակում, որպեսզի աշակերտներն ավելի լավ նախապատրաստվեն ավարտական քննություններին: Ի պատասխան Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է այդ հարցը քննարկել բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստում

նույնպես, քանի որ երկրորդ կիսամյակի ընթացքում այդ բաղադրիչն անցնում է «Հայոց պատմություն» առարկային, որից հետո կկայացվի համապատասխան որոշում:

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանումը (կցվում է), այդ թվում՝ դպրոցական բաղադրիչը:

*Լսեցին 5.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, թեմատիկ պլանների, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, դրանով նախատեսված հիմնական աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան: Արտադասարանական խմբակների ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են ուսուցիչների կողմից, հիմք ընդունելով խմբակների կազմակերպման մասին համապատասխան կարգը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ս. Բաղդասարյանը, Հ. Ալավերդյանը:

Արտահայտվողները նշեցին, որ առարկայական ծրագրերում փոփոխություններ չկան և թեմատիկ պլանները, ինչպես նաև ՕԹՊ-ները կարող են կազմվել առաջնորդվելով այդ ծրագրերով և հիմք ընդունելով դպրոցում կիրառվող դասագրքերով: Ս. Ավանեսյանը նշեց, որ խմբակների ծրագրերը չպետք է կրկնեն դպրոցական դասընթացի ծրագիրը և որ անհրաժեշտ է ընտրել ավելի արդիական և ավելի գործնական թեմաներ՝ աշակերտների համար ավելի հետաքրքիր ու ավելի կիրառական դարձնելով խմբակները:

*Որոշեցին՝* Հաստատել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը, թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները, արտադասարանական խմբակների ծրագրերը և օրացուցային-թեմատիկ պլանները:

*Լսեցին 6.* Բնագիտամաթեմատիկական առարկաներից տրվող գրավոր աշխատանքների քանակն ու տեսակները հաստատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց թեմատիկ գործնական և գրավոր աշխատանքների կարևորության և դրանց անաչառ անցկացման մասին: Հիշեցրեց, որ թեմատիկ գրավորների քանակը պետք է համապատասխանի շաբաթական ժամաքանակին՝ կիսամյակի կտրվածքով, սակայն նշեց, որ հնարավոր է թեմատիկ գրավորների քանակության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ՝ կախված ուսուցիչների առաջարկությունից, հավելեց, որ յուրաքանչյուր կիսամյակի մեկական գործնական աշխատանքի ընտրությունը կախված է ուսուցչի հայեցողությունից:

*Արտահայտվեցին՝* Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին թեմատիկ գրավոր աշխատանքների քանակության մեջ որևէ փոփոխություն չկատարել:

*Որոշեցին՝* Ապահովել ուսումնական տարվա ընթացքում պետական չափորոշիչներով սահմանված գրավոր աշխատանքների քանակն ու բազմազանությունը, այն է

շաբաթական դասաժամերի քանակով տալ գրավոր աշխատանքներ՝ երկու կիսամյակների ընթացքում:

*Լսեցին 7.* Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդրման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իր կողմից հայտարարվել է, որ 2022-2023 ուսումնական տարվանից դպրոցում պարտադիր են լինելու ՕԴՊ-ների էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև նրա կողմից ներկայացվել է համապատասխան ձևանմուշը:

Զեկուցողը նշել է, որ հաստատման և կամ ներդրման դեպքում ՕԴՊ-ները պարտադիր են լինելու բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

*Արտահայտվեցին՝* Հ. Ալավերդյանը, Ա. Մարտիրոսյան

Արտահայտվողները ողջունեցին զեկուցողի առաջարկը, նշեցին, որ ներկայացված ՕԴՊ-ի տարբերակը հարմար է և ուսուցչի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի ստեղծի, հատկապես այն դեպքում, երբ ՕԴՊ-ները կլրացվեն էլեկտրոնային տարբերակով, այդ տարբերակով նույնպես կարխիվացվեն և հետագայում կիրառության ժամանակ և դրանում փոփոխություններ կատարելու դեպքում դժվարություններ չեն լինի:

*Որոշեցին՝* 2022-2023 ուսումնական տարվանից ներդնել օրվա դասի պլանները (այսուհետ՝ ՕԴՊ), դրանք լրացնել բացառապես էլեկտրոնային տարբերակով: 2022-2023 ուսումնական տարվանից սկսած ՕԴՊ-ները պարտադիր են բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Ա.Դաշունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«23» սեպտեմբեր 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաչունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Արմանուշ Բակունց
7. Մերի Մկրտչյան
8. Մարինե Յոլյան
9. Մարետա Հարությունյան
10. Կարինե Արզումանյան
11. Սերգեյ Ավանեսյան

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)
2. 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)
3. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Մեթոդական զեկուցումների իրականացում:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)
5. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի արդյունքների քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը ներկայացրեց, որ 1-ին նիստում նախատեսված աշխատանքները մեծամասամբ ավարտված են: Որոշ ուսուցիչներ չեն աշխատում ՕԴՊ-ների վրա, ինչի արդյունքում հնարավոր է, որ ամսվա վերջում չհասցնեն ներկայացնել սեպտեմբերի ՕԴՊ-ները:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ Հերմինե Ալավերդյանը պատրաստել է ամբողջ ուսումնական տարվա համար նախատեսված ՕԴՊ-ները, Արփինե Մարտիրոսյանը ներկայացրել է «Մաթեմատիկա» առարկայի 6-րդ դասարանի սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների, «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաների 7-րդ և 9-րդ դասարանների 1-ին կիսամյակի համար նախատեսված ՕԴՊ-ները, Ալլա Զեյնալյանը ներկայացրել է «Մաթեմատիկա» առարկայի 5-րդ դասարանի սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ՕԴՊ-ները, ինչպես նաև պատրաստ են «Ինֆորմատիկա» առարկայի 6-9-րդ դասարանների ամբողջ ուսումնական տարվա համար նախատեսված ՕԴՊ-ները: Հորդորվեց բոլոր ուսուցիչներին ավելի ակտիվ աշխատել, որպեսզի յուրաքանչյուր ամսվա ավարտին հնարավոր լինի ներկայացնել տվյալ ամսվա ՕԴՊ-ները:

*Որոշեցին՝* Կատարված աշխատանքների մասին ինֆորմացիան ընդունել ի գիտություն, ինչպես նաև ուսուցիչներին հանձնարարել յուրաքանչյուր ամսվա ավարտին ուսումնական մաս ներկայացնել տվյալ ամսվա ՕԴՊ-ները:

*Լսեցին 3.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ-ուսուցչի օգնական համագործակցությունը, նշեց, որ ուսուցչի օգնական նախքան դասապրոցեսի սկսելը, պարտադիր կերպով պետք է ստանա համապատասխան ցուցումներ տվյալ օրվա դասի ընթացքում իրականացվող և իրականացվելիք աշխատանքների հետ կապված, որից հետո նոր մեկնարկի ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատանքը: Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսուցիչ-ծնող համագործակցությանը: Առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների և ծնողների միջև՝ առաջացած խնդիրները լուծելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* Ա. Դաջունցը, Մ. Հարությունյանը, Հ. Ալավերդյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հաճախակի են հանդիպում խնդիրներ, երբ որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը որոշակի կերպով չի հաջողվում, կապված նրանց ուշ գնահատման, վկայագրման հետ, ինչպես նաև կախված ԿԱՊԿՈՒ աշակերտի խնդիրներից:

Հարությունյանը նշեց, որ կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը բարդ է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ուսուցչի օգնականի համար: Առաջարկեց ավելի սերտորեն համագործակցել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ, որպեսզի տվյալ աշակերտներին հնարավոր լինի հնարավորինս ավելի մասնակից դարձնել դասապրոցեսին և ապահովել ԱՈՒՊ-ով, օրվա դասի պլանով սահմանված նպատակները:

*Որոշեցին՝* Ապահովել ուսուցիչ-ուսուցչի օգնական-ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչ-ծնող կապը, այն ավելի սերտացնել, ինչպես նաև հաճախակի կազմակերպել եռակողմ հանդիպումներ և քննարկումներ՝ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ծնողների միջև, ըստ անհրաժեշտության ընդգրկել նաև ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներին:

*Լսեցին 4.* Մեթոդական զեկուցումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողն առաջարկեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում, համագործակցելով դպրոցի մյուս մեթոդական միավորումների հետ, իրականացնել մեթոդական զեկուցումներ, ինչը կնպաստի դասավանդման պրոցեսի ավելի արդյունավետ կազմակերպմանը, դասապրոցեսն աշակերտների համար ավելի ակտիվ ու գրավիչ դարձնելուն, աշակերտակենտրոն ուսուցմանը:

Ավելի շատ ուշադրություն դարձնել աշակերտների ներգրավմանը: Հնարավորությունների սահմաններում օգտագործել դիդակտիկ նյութեր, պաստառներ, սարքավորումներ, ինչպես նաև համակարգչային միջոցների ընձեռած հնարավորությունները: Համատեղ ինտեգրված դասեր կազմակերպել բնագիտական առարկաների, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի շրջանակներում: Խթանել սովորողների հետաքրքրասիրությունը, որպեսզի դասապրոցեսին ավելի շատ աշակերտներ մասնակցեն:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Մ. Յոլյանը

Արտահայտվողները ողջունեցին Դաջունցի առաջարկը, նշեցին, որ նպատակահարմար է ուսումնական տարվա ընթացքում կիսամյակում 1 անգամ իրականացնել մեթոդական զեկուցումներ, որի ընթացքում ուսուցիչները կներկայացնեն իրենց փորձը, գիտելիքները, այն ուսուցման մեթոդները, որոնց կիրառմամբ աշխատում են կոնկրետ դասարաններում և կոնկրետ աշակերտների հետ:

*Որոշեցին՝* Համագործակցելով դպրոցի մյուս մեթոդմիավորումների հետ, մինչև 2022-2023 ուսումնական տարվա ավարտը կազմակերպել մեթոդական զեկուցումներ, յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում մեկ մեթոդական զեկուցում:

***Լսեցին 5.*** Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Դաջունց)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպումը ոչ միայն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամների, այլ նաև մյուս մեթոդմիավորումների կազմում ընդգրկված անդամների միջև: Շեշտեց փոխադարձ դասալսումների կարևորությունը, քանի որ այն նախ և առաջ և՛ փորձառու, և՛ համեմատաբար ավելի քիչ փորձ ունեցող ուսուցիչների կողմից փորձի փոխանակում է: Դասալսումների ժամանակ պետք է օգնել ու խրախուսել ուսուցիչներին, համատեղ քննարկել ձեռքբերումներն ու թերությունները, շեշտադրել այն առանցքային հարցերի կատարումը, որոնք նախատեսված են չափորոշիչային պահանջներով: Դասի վերլուծություն արձանագրության մեջ մանրամասն նշված են այն կարևոր առանցքային կետերը, որոնք պետք է դասալսողի, ինչպես նաև դաս պարապող ուսուցչի ուշադրության կենտրոնում լինեն: Դասալսումը պետք է լինի օբեկտիվ, կառուցողական և կրթադաստիարակչական աշխատանքին նպաստող:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Մ. Յոլյանը, Ա. Մարտիրոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ շատ արդյունավետ են փոխադարձ դասալսումները: Հավելեցին, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները հնարավորություն են ստանում ոչ միայն ձեռք բերել նոր հմտություններ ու կարողություններ, այլ նաև առանձնակի ուշադրություն է դարձվում միջառարկայական կապերի, ինչպես նաև ուսումնական պրոցեսում ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառությանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ավագ գործընկերների մոտ կատարված փոխադարձ դասալսումները, ինչի շնորհիվ մանկավարժությամբ նոր զբաղվող ուսուցիչները հնարավորություն են ստանում ձեռք բերել նոր հմտություններ, կարողություններ, ծանոթանալ ուսումնական պրոցեսում արդիական և կիրառվող մեթոդներին ու հնարներին:

*Որոշեցին՝* Համախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ, դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գործածել ուսուցման արդի մեթոդներ ու հնարներ, ՏՀՏ-ներ:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ուսումնական տարվա թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

*Արտահայտվեցին՝* Ս.Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«28» հոկտեմբեր 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝
1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Արմանուշ Բակունց
7. Մերի Մկրտչյան
8. Մարինե Յոլյան
9. Մարետա Հարությունյան
10. Կարինե Արզումանյան
11. Օլյա Ղուլյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
4. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում, դպրոցական օլիմպիադաներին մասնակցող աշակերտների հետ տարվող աշխատանքների կազմակերպում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
5. Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում կատարվող աշխատանքներ:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)
7. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝* Մ/մ անդամները

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2-րդ նիստում նախատեսված աշխատանքները մեծամասամբ ավարտված են: ԱՈՒՊ-ների լրացումը դեռևս ավարտված չէ, քանի որ լրացման ձևի մեջ որոշ փոփոխություններ են կատարվել: Օրվա դասապլանների էլեկտրոնային տարբերակները նույնպես ավարտված չեն:

*Արտահայտվեցին՝* Մ. Բազդասարյանը, Ա. Մարտիրոսյանը: Նրանք նշեցին, որ ԱՈՒՊ-ների լրացման փոփոխությունները ավարտված են: Բոլոր ուսուցիչները միանգամից չեն կարող ավարտել աշխատանքները, այդ իսկ պատճառով կան ուշացումներ: Դասապլանների էլեկտրոնային տարբերակները պատրաստ կլինեն մինչև հոկտեմբերի վերջ:

*Որոշեցին՝* Աշխատանքները ավարտել սեղմ ժամկետներում:

*Լսեցին 3.* Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբի ուսուցիչներին կողմից տրված են թեմատիկ պլանավորմամբ նախատեսված գրավոր աշխատանքները ստուգված և գնահատված են: ՕԹՊ-ների նշված ժամկետների մեջ կան որոշ փոփոխություններ, որոնց մասին ուսուցիչները նախապես տեղեկացվել են:

*Արտահայտվեցին՝* Մ. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ նախորդ ուսումնական տարվա ընթացքում «Քիմիա» առարկայի դեպքում արձանագրվել է դեպք, երբ ուսուցիչը թեմատիկ գրավոր աշխատանքը սահմանված ժամկետում չի տվել: Այդ մասին ուսուցչուհի Անուշ Դաջունցը տեղեկացվել է և հորդորվել, որ այլևս նման կերպ չաշխատի:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն թեմատիկ գրավոր աշխատանքների կատարողականը:

*Լսեցին 4.* Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման, դպրոցական օլիմպիադաներին մասնակցող աշակերտների հետ տարվող աշխատանքների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց )

Զեկուցողը նշեց, որ օլիմպիադաներին պետք է մասնակցեն տվյալ առարկաների նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն դրսևորող աշակերտները: Ուսուցիչները այդ աշակերտների հետ պետք է կատարեն արտաժամյա աշխատանք, տան հանձնարարություններ, առաջադրանքներ, քննարկեն նախորդ տարիների օլիմպիադաներում տրված առաջադրանքները: Նշվեց, որ պետք չէ նույն աշակերտին ընդգրկել մի քանի առարկաների օլիմպիադաներում, որպեսզի վերջիններս ավելի արդյունավետ աշխատեն իրենց նախընտրած առարկայի օլիմպիադային: Զեկուցողը նշեց, որ այս ուսումնական տարում «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաներից օլիմպիադային մասնակցող աշակերտներ չկան: Սա նշանակում է, որ աշակերտները նշված առարկաների հանդեպ հետաքրքրություն չեն դրսևորում: Զեկուցողը նշեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը նպատակահարմար է,

որ իրականացնեն մեթոդմիավորման նախագահը, տվյալ առարկաների ուսուցիչները, ինչպես նաև ուսուցչի օգնականները:

*Արտահայտվեցին՝* Ա. Բակունցը, Մ. Յոլյանը, Մ. Մկրտչյանը:

Արտահայտվողները նշեցին, որ դպրոցական դասագրքերը, և այդ առարկաներին հատկացվող ժամաքանակը բավարար չէ օլիմպիադաներում մրցութային տեղեր զբաղեցնելու համար: Աշակերտների մի մասը անհատական լրացուցիչ պարապմունքների մասնակցում են հատկապես ավելի բարձր դասարաններում: Նշվեց, որ այդ առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրությունների նվազումը ցույց է տալիս նաև միասնական քննություններին այդ առարկաների մասնակցության քանակը և բուհերում սովորողների թիվը:

*Որոշեցին՝* Լրացուցիչ աշխատել այն աշակերտների հետ, ովքեր մասնակցելու են բնագիտամաթեմատիկական առարկաների օլիմպիադաներին: Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման աշխատանքների համար ընդգրկել մեթոդմիավորման նախագահին, տվյալ առարկաների ուսուցիչներին, ինչպես նաև ուսուցչի օգնականներին:

*Լսեցին 5.* Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում կատարվող աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցերը դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների համատեքստում շատ կարևոր և առանձնահատուկ նշանակություն ունի, ուսուցիչների կողմից պետք է այդ ուղղությամբ ավելի ակտիվ աշխատանքներ տարվեն: Հաշվի առնվեն սովորողների նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակությունները և օգնեն նրանց կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում: Հավելեց, որ սովորողների հետ անհրաժեշտ է անցկացնել զրույցներ, խորհրդատվություններ, զեկուցումներ, ծանոթացնել արդի աշխատաշուկայում ավելի արագ կողմնորոշվելու ու աշխատանք ունենալու հնարավորություններին: Կազմակրպել հանդիպումներ բուհերի և այլ ուսումնական հաստատությունների սովորողների և դասախոսների հետ: Լուսաբանել աշակերտներին հետաքրքրող հարցերը, որոնք վերաբերում են մասնագիտության ընտրությանը: Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվանից դպրոցում ներդրված է Մասնագիտական կողմնորոշման ակումբը, որի շրջանակում նույնպես իրականացվում են համապատասխան աշխատանքներ:

*Արտահայտվեցին՝* Հ. Ալավերդյանը, Մ. Հարությունյանը, Կ. Արզումանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ այսօրվա պայմաններում սովորողները ավելի շատ հակված են տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերվող մասնագիտությունների ընտրությանը: Տեխնոլոգիայի դասերին նույնպես կատարվում են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ՝ և՛ տղաների, և՛ աղջիկների հետ անցկացվող դասաժամերին, որն ավելի առարկայական է: Նրանք ծանոթանում են փականագործի, հյուսնի, խոհարարի, դերձակի և այլ մասնագիտությունների տարրական հիմունքներին: Ճիշտ մասնագիտական կողմնորոշումը կօգնի սովորողների հեշտ և արագ կողմնորշվելուն:

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների դասաժամերին, ինչպես նաև արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների կազմակերպման ժամանակ ուշադրություն դարձնել մասնագիտական կողմնորոշման հարցերին, իմանալ սովորողների նախասիրություններն ու ճիշտ ուղղորդել նրանց:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաչունց )

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային մատենավարության մեջ կան որոշ թերություններ, հավելեց, որ իրականացվում են էլեկտրոնային մատենավարության ամենշաբաթյա ստուգումներ:

*Արտահայտվեցին՝* Ա. Բակունցը, Մ. Հարությունյանը, Կ. Արզումանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ արձանագրված թերություններից որոշները պայմանավորված են համացանցի թույլ կապով. որոշ գնահատականներ թույլ կապի պատճառով մատյանում չեն հաստատվել:

*Որոշեցին՝* Լինել ավելի ուշադիր էլեկտրոնային մատենավարությանը՝ հետագա թերություններից խուսափելու համար:

*Լսեցին 7.* Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության մասին, քանի որ դասի այս տիպերը լինում են օրինակելի, ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները: Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասսայականացնել: Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների, միջոցառումների ժամանակացույցի նախագիծը:

*Արտահայտվեցին՝* Ա. Զեյնալյանը, Ս. Բաղդասարյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունելով փոխտնօրեն Ս. Ավանեսյանի առաջարկը՝ կազմել ժամանակացույց, ըստ որի կազմակերպել բաց դասեր, դաս-միջոցառումներ՝ առաջին կիսամյակի ընթացքում, բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ բոլոր ուսուցիչների կողմից:

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Մ/Մ նախագահ՝ ________________ Ա.Դաչունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈւԹՅՈւՆ № 4

«23» նոյեմբեր 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Հերմինե Ալավերդյան
3. Սիրուշ Բաղդասարյան
4. Արփինե Մարտիրոսյան
5. Ալլա Ջեյնալյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մերի Մկրտչյան
9. Մարինե Յոլյան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան

**Նիստին ներկա էին ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի հաստատում:

   (զեկուցող՝ Ա. Դաջունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկում:

   (զեկուցող՝ Ա. Դաջունց)
3. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

   (զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնային դասամատյանների ստուգում:

   (զեկուցող՝ Ա. Դաջունց)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշվեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները սահմանված ժամկետներում հիմնականում կատարվել են:

*Արտահայտվեցին՝* Ա.Ավանեսյան

Արտահայտվողը նշեց, որ էլեկտրոնային մատյանները հիմնականում լրացվում են օրացույցային թեմատիկ պլաններին համապատասխան, սակայն որոշ ուսուցիչների մոտ նկատվում են բացթողումներ, որոնք կապված են մատյանի թեմաների ուշ լրացման հետ, հավելեց, որ այդ մասին ուսուցիչները տեղեկացված են:

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Լսեցին 3.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների և այդ աշխատանքների պատշաճ կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական պրոցեսում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքներում նախատեսված արդյունքին հասնելու համար պետք է աշխատել համատեղ ու հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականի, դասավանդող ուսուցչի, ինչպես նաև ծնողի հետ համագործակցելով՝ թիմային աշխատանքի դեպքում է հնարավոր հասնել սահմանված վերջնարդյունքներին:

*Արտահայտվեցին՝* Ա. Ծատրյանը, Ա. Զեյնալյանը, Մ. Մկրտչյանը:

Արփինե Ծատրյանը նշեց, որ շատ կարևոր է աշխատանքների ճիշտ կազմակերպումը և բոլոր կողմերի մասնակցությունը: Այդ գործընթացին մասնակից դարձնել ծնողներին և ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներին: Արտահայտվողները համակարծիք էին նաև, որ յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ անհրաժեշտ է կատարել խիստ անհատական աշխատանք:

*Որոշեցին՝* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ավելի մեծ արդյունքներ գրանցելու համար համագործակցությունը հատուկ մանկավարժների, ուսուցչի օգնականի, ուսուցիչների, ԳՏՄԱԿ ներկայացուցչի, ծնողի հետ ավելի սերտացնել:

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց փոխտնօրեն Ավանեսյանին առաջացած խնդիրների և արձանագրված թերությունների մասին:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Ս. Ավանեսյանը նշեց, որ էլեկտրոնային դասամատյանի գրանցումների ՕԹՊ-ների հետ որոշ անհամապատասխանություններ կան, գնահատականները քիչ են, հանձնարարվեց հնարավորինս շտկել բաց թողումները:

*Որոշեցին՝* Հնարավոր բոլոր տարբերակները օգտագործել մատենավարության մեջ եղած բացթողումները վերացնելու համար: Լինել հետևողական ՕԹՊ-ների և կատարվող գրանցումների համապատասխանության հարցում:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Ա.Դաչունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«26» դեկտեմբեր 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Անուշ Դաչունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մերի Մկրտչյան
9. Մարինե Բաբայան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

3. «Մաթեմատիկա» առարկայից տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

4. Էլեկտրոնային մատյաններում տեղ գտած թերությունների վերացում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. Առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

6. Առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկման մասին հացրը:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Լսեցին 3.* «Մաթեմատիկա» առարկայից տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց անկողմնակալ վերաբերմունքը՝ հատկապես գրավոր աշխատանքների ստուգման հարցում: Հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը), մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա:

*Արտահայտվեցին՝* Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտների մոտ կային անուշադրական սխալներ, որոնք էլ ազդել էին գրավոր աշխատանքների որակի վրա, սակայն ի տարբերություն նախորդ ուսումնական տարվա ընթացքում տրված գրվորների, ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում նկատվում է, որ աշակերտներն արդեն հարմարվել են տնօրենության գրավորների սկզբունքին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում «Մաթեմատիկա» առարկայից տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների մասին զեկույցը (կցվում է):

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային մատյաններում առկա են որոշակի թերություններ, հատկապես թեմատիկ գրավոր աշխատանքների գնահատման հետ կապված: Առկա են նաև անհամապատասխանություններ ՕԹՊ-ների ժամկետների հետ, ինչպես նաև որոշ ուսուցիչների մոտ գնահատականները

քիչ են: Անհրաժեշտ է մինչև 2-րդ կիսամյակի մեկնարկը վերացնել արձանագրված թերությունները:

*Արտահայտվեցին՝* Ա. Դաջունցը
Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ժամանակին աջակցել ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ: Դաջունցը նշեց, որ արդեն արձանագրվել են խնդիրներ կապված գրանցումների և ՕԹՊ-ների անհամապատասխանության հետ:

*Որոշեցին՝* Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Ս.Ավանեսյանի հետ:

*Լսեցին 5.* Առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը կարևորեց ըստ չափորոշչային պահանջների տրված գրավոր աշխատանքների համապատասխանությունը ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և տրված թեմատիկ, գործնական աշխատանքների քանակին: Նշեց թեմատիկ պլանների կատարողականի մասին:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը:
Ավանեսյանը նշեց, որ գործնական աշխատանքներ հանձնարարելիս ուսուցիչը ազատ է ընտրության մեջ, և որ թեմատիկ ու գործնական աշխատանքները տրված են ըստ ժամաքանակի:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել պարբերական ստուգումներ թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

*Լսեցին 6.* Առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների, բաց դասերի, դաս-միջոցառումների արդյունքների վերլուծությունը: Նշեց, որ փոխադարձ դասալսումներն անհրաժեշտ են դասի որակը բարձրացնելու և մասնագիտական, մանկավարժական փորձի փոխանակման համար: Զեկուցողը մանրամասն նշեց տեղ գտած թերություններն ու բացթողումները, ինչպես նաև ներկայացրեց 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների ամփոփագիրը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը
Արտահայտվողը կարևորեց յուրաքանչյուր դասալսում, քանի որ այն միտված է օգնելու և աջակցելու ուսուցիչներին՝ հատկապես սկսնակներին: Նշվեց նաև դասալսումների քննարկման և խնդիրների վեր հանման մասին: Ս. Ավանեսյանը նշեց նաև փոխադարձ դասալսումների և քննարկումների ժամանակ մյուս մեթոդմիավորումների կազմում ընդգրկված ուսուցիչների հետ համագործակցության կարևորության մասին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների, բաց դասերի, դաս-միջոցառումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը), ինչպես նաև ձեռնարկել միջոցառումներ թերությունները շտկելու ուղղությամբ:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Ա.Դաչունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

**ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6**

«04» հունվար 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Անուշ Դաչունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մերի Մկրտչյան
9. Մարինե Բաբայան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի հաստատում:

   (զեկուցող՝ Ա. Դաչունց)
2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկում:

   (զեկուցող՝ Ա. Դաչունց)
3. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաշխման փոփոխությունների հաստատում:

   (զեկուցող՝ Ա. Դաչունց)

4. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի ներկայացում և քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման դեկտեմբեր ամսվա օրակարգի կատարողականը: Ամփոփեց մեթոդմիավորման նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները կատարվել են:

*Արտահայտվեցին՝* Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ շատ կարևոր է նախորդ նիստում քննարկված հարցերը, որոնք հնարավորություն են տալիս ավելի հստակեցնել 2-րդ կիսամյակում կատարվելիք աշխատանքները:

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստերի որոշումների հիման վրա կազմակերպել նոր կիսամյակի աշխատանքները:

*Լսեցին 3.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաշխման փոփոխությունների և այդ փոփոխությունների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2-րդ կիսամյակի ժամերի փոփոխությունը վերաբերում է «Հանրահաշիվ» առարկայի 8-րդ և 9-րդ դասարաններին և «Քիմիա» առարկայի 7-րդ դասարանին: Հանրահաշիվը շաբաթական պակասում է 1 ժամով (4 ժամի փոխարեն՝ 3 ժամ), քիմիան շաբաթական ավելանում է 1 ժամով (1 ժամից դառնում է 2 ժամ):

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը:

Ս. Ավանեսյանը նշեց, որ նշված փոփոխությունները քննարկվել են նաև 2022-2023 ուսումնական տարվա նախնական դասաբաշխման և հիմնական դասաբաշխման ժամանակ:

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաշխման փոփոխությունները և ժամաբաշխումը (կցվում է):

*Լսեցին 4.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ մանկավարժության, կրթական ոլորտում կատարվող փոփոխություններին, նորություններին տեղյակ լինելու համար կարևոր են վերապատրաստումները: Այն ուսուցիչները, ովքեր չեն վերպատրաստվել և այն ուսուցիչները, որոնց վերապատրաստման ժամանակը 5 տարուց ավելի է, պետք է մասնակցեն պարտադիր վերապատրաստման գործընթացին:

Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման անդամներից 2023-2024 ուսումնական տարում պարտադիր վերապատրաամանը պետք է մասնակցեն Ալլա Զեյնալյանը, Արմանուշ Բակունցը, Կարինե Արզումանյանը, Մարետա Հարությունյանը:

*Արտահայտվեցին՝* Ա. Դաջունցը, Մ. Բաբայանը:

Արտահայտվողները նշեցին, որ արդի մեթոդներին և հնարներին տիրապետելը հատկապես անհրաժեշտ է դասի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանք կարևորեցին պարտադիր վերապատրաստման գործընթացը, քանի որ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ կատարվող փոփոխություններին ու նորամուծություններին և կատարել փորձի փոխանակում:

*Որոշեցին՝* Ապահովել նշված ուսուցիչների մասնակցությունը կազմակերպվող պարտադիր վերապատրաստումներին:

Մ/Մ նախագահ՝ ________________ Ա.Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«08» փետրվար 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Սիրուշ Բաղդասարյան
2. Արփինե Մարտիրոսյան
3. Ալլա Զեյնալյան
4. Հերմինե Ալավերդյան
5. Օլյա Ղուլյան
6. Արմանուշ Բակունց
7. Մերի Մկրտչյան
8. Մարինե Բաբայան
9. Մարետա Հարությունյան
10. Կարինե Արզումանյան

**Նիստը վարում էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

3. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՕԴՊ-ների հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

4. Էլեկտրոնային մատենավարության հարցեր

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի որոշումների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՕԴՊ-ների հետ կապված հարցերը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ՕԴՊ-ների կազմումը էլեկտրոնային տարբերակով կարևոր է ուսուցչի համար: Անհրաժեշտ է արագացնել ՕԴՊ-ների հետ կապված աշխատանքները, վերացնել այդ աշխատանքներում տեղ գտած թերությունները: Զեկուցողը հավելեց, որ ՕԴՊ-ների անհրաժեշտության մասին, կարևորեց դրանց առկայությունը յուրաքանչյուր դասաժամի համար, քանի որ այս գործընթացի արդյունքում հեշտանում է ուսուցչի աշխատանքը և բարձրանում է դասի արդյունավետությունը:

*Արտահայտվեցին՝* Ա. Զեյնալյանը, Կ. Արզումանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ ՕԴՊ-ների էլեկտրոնային տարբերակները նորություն են և առաջացած թերությունները պայմանավորված են այդ հանգամանքով:

*Որոշեցին՝* Սահմանված ժամկետում ավարտել ՕԴՊ-ների էլեկտրոնային տարբերակների կազմումը և թերությունների վերացումը:

*Լսեցին 4.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում էլեկտրոնային մատենավարության հարցերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային մատենավարության հարցերը շատ կարևոր են, դրանք ամբողջ տարվա ընթացքում պետք է լինեն ուշադրության կենտրոնում: Համապատասխանությունը ՕԹՊ-ների հետ, թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների հետ:

*Արտահայտվեցին՝* Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման անդամները:
Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների կողմից մատենավարության բարեխիղճ կատարումը, ըստ անհրաժեշտության խորհուրդներ տալը և համապատասխան դիտարկումներ կատարելը:

*Որոշեցին՝* Էլեկտրոնային մատենավարության հարցերը պահել ուշադրության կենտրոնում, պարբերաբար ստուգումներ կատարել, վերացնել հնարավոր թերությունները:

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«09» մարտ 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Սիրուշ Բաղդասարյան
2. Արփինե Մարտիրոսյան
3. Ալլա Զեյնալյան
4. Հերմինե Ալավերդյան
5. Օլյա Ղուլյան
6. Արմանուշ Բակունց
7. Մերի Մկրտչյան
8. Մարինե Բաբայան
9. Մարետա Հարությունյան
10. Կարինե Արզումանյան

**Նիստը վարում էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ 7-րդ նիստի որոշումների կատարման հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

4. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի որոշումների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյանարդեն արձանագրված թերությունններն ու անհամապատասխանությունները: Նշեց, որ մինչև մարտ ամիսը որոշ ուսուցիչների մոտ մատյաններում արձանագրվել են թերություններ, մասնավորապես, թեմաները չեն լրացվել կամ ՕԹՊ-ին համապատասխան չեն լրացվել, հավելեց, որ դրանք անհրաժեշտ սեղմ ժամկետում վերացնել:

*Արտահայտվեցին՝* Ա. Զեյնալյանը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ժամանակին աջակցել ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ: Զեյնալյանը նշեց, որ արդեն արձանագրվել են խնդիրներ կապված գրանցումների և ՕԹՊ-ների անհամապատասխանության հետ:

*Որոշեցին՝* Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ:

*Լսեցին 4.* Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ դասարանում աշակերտները հանձնում են քննություն «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաներից: Վերջինս իր մեջ ներառում է «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներից: Զեկուցողը նշեց նաև, որ վերոնշյալ առարկաների քննական տոմսերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, դպրոցին մնում է միայն պատշաճ կազմակերպել քննական գործընթացը:

*Արտահայտվեցին՝* Մ. Բաբայանը, Ա. Դաջունցը, Ա. Բակունցը, Հ. Արալվերդյանը

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտների մոտ քննական առարկաներից գիտելիքների պաշարը հիմնականում գոհացուցիչ է: Աշակերտներն ունեն եռամակարդակի պահանջներին համապատասխան գիտելիքներ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանում քննական առարկաների զեկուցման հետ կապված ինֆորմացիան:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և մաթեմատիկայի ուսուցիչների հետ քննարկման արդյունքում 5-9-րդ դասարանների ուսումնական նյութերից կազմվել են թեստեր, որոնց միջոցով կիրականացվեն տնօրենության գրավորները:

*Արտահայտվեցին՝* Ա. Մարտիրոսյանը, Ս. Բաղդասարյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ կազմված թեստերը համապատասխանում են տվյալ դասարանների ծրագրային նյութին:

*Որոշեցին՝* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից տալ տնօրենության գրավորներ:

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ____________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

«21» ապրիլ 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաչունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մերի Մկրտչյան
9. Մարինե Բաբայան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան

**Նիստին ներկա էր ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը**

ՕՐԱԿԱՐԳ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

3. Տնօրենության կողմից տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

4. Մրցույթ-վիկտորինայի կազմակերպում՝ «Աշխարհագրություն» առարկայից՝ 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների միջև:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. Ընթացիկ հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստերի որոշումների կատարման մասին զեկուցումը ընդունել ի գիտություն:

*Լսեցին 3.* Տնօրենության կողմից տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց տնօրինության կողմից տրված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքների արդյունքների գոհացուցիչ են: Ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում և ընթացիկ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում, 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից գրավորները նույնպես տրվել են կոդավորված տարբերակով, ինչը ստուգման ընթացքում ապահովել է անկողմնակալությունը:

Զեկուցողը հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա:

*Արտահայտվեցին՝* Ս. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Զեյնալյանը:

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտներից որոշները դժվարանում են տեսական գիտելիքները կիրառել խնդիրների լուծման ժամանակ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 4.* «Աշխարհագրություն» առարկայից՝ 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների միջև մրցույթ-վիկտորինայի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող Ա. Դաչունց)

Զեկուցողը նշեց, որ 8-րդ և 9-րդ դասարանների միջև «Աշխարհագրություն» առարկայից մրցույթ–վիկտորինան կազմակերպվել է «Աշխարհագրություն» առարկայի ուսուցչուհի Հերմինե Ալավերդյանի կողմից: Մրցույթն անցել է հետաքրքիր և լարված: Աշակերտները դրսևորել են իրենց հմտությունները, գիտելիքները, թիմով աշխատելու կարողությունները:

*Արտահայտվեցին*՝ Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման անդամները:

Արտահայտվողները ողջունել են Հերմինե Ալավերդյանի կողմից մրցույթ-վիկտորինայի անցկացումը, նշել, որ այն սովորեցնում է աշակերտներին լարված, մրցակցային միջավայրում արագ կողմնորոշվել, արտահայտել իրենց գիտելիքը:

*Որոշեցին*՝ Ընդունել ի գիտություն «Աշխարհագրություն» առարկայից՝ 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների միջև մրցույթ-վիկտորինայի կազմակերպման մասին զեկուցումը:

*Լսեցին 5.* Ընթացիկ հարցերի քննարկման մասին հարվը:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման հանձնախմբում ամենօրյա աշխատաքների ուշադրության կենտրոնում պետք է լինի էլեկտրոնային մատենավարության, փոխադարձ դասալսումների, 9-րդ դասարաններում քննությունների նախապատրաստման հարցերը, ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարվող աշխատանքները, մասնագիտական կողմնորոշման համար կատարվող աշխատանքները ճիշտ կազմակերպել, փոխադարձ այցելություններ, դասախոսություններ, այցելություններ արտադրական արհեստանոցներ և այլն:

*Արտահայտվեցին*՝ Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ զեկուցողի կողմից բարձրաձայնված հարցերի շուրջ իրականացվում են ամենօրյա աշխատանքներ և հնարավորության սահմաններում ուշադրության կենտրոնում են պահվում:

*Որոշեցին*՝ Ամեօրյա աշխատանքներում ուշադրության կենտրոնում պահել նշված հարցերը և ընդունել ի գիտույթուն:

Մ/Մ նախագահ՝ ____________________ Ա.Դաչունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ____________________ Ս. Ավանեսյան

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

«10» մայիս 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Անուշ Դաչունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Ջեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մերի Մկրտչյան
9. Մարինե Բաբայան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

4. 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

6. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերի ու հարցատոմսերի քննարկում, հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

7. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

8. 2023-2024 ուսումնական տարվա արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկում, հաստատում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

9. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատել:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

10. Բնագիտամաթեմատիկական առարկաների ծրագրերի և թեմատիկ պլանների կատարողականի ստուգման մասին:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգի կետերը:

(զեկուցող Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգում նշված հարցերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց,որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

*Արտահայտվեցին՝* Ա. Դաջունցը, Ա. Մարտիրոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 22-ի №10 և 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 495-Ա/2 հրամանները:

*Որոշեցին՝* Հաստատել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է):

*Լսեցին 4.* 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների բոլոր քննությունները գրավոր տարբերակով են, իսկ այդ թեստերը մշակվում և դպրոցին են տրամադրվում ԳԹԿ-ի կողմից: Առավելագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին նախապատրաստել և դասերի ընթացքում և խորհրդատվությունների ժամանակ:

*Արտահայտվեցին՝* Ա. Մարտիրոսյանը, Մ. Բաբայանը, Հ. Ալավերդյանը

Արտահայտվողները նշեցին, որ կրկնությունների ժամանակ աշխատում են այդ հարցատոմսերի օրինակներով, հիմնականում նախորդ ուսումնական տարվա ընթացքում կիրառված տարբերակով, ինչպես նաև խորհրդատվությունների ժամանակ օգտագործում են այլ գրականություն, ինչը պետք է որ նպաստի աշակերտների կողմից քննությունների ընթացքում պատշաճ առաջադիմության և որակի գրանցմանը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 9-րդ դասարաններում բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցումը:

*Լսեցին 5.* 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Քիմիա» առարկաներից, հավելեց, որ քննական թեստերը կազմվելու են ԳԹԿ-ի կողմից:

Զեկուցողը նշեց նաև, որ քննությունների ժամանակացույցը կազմվել է ԳԹԿ-ի կողմից:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը (կցվում է):

*Լսեցին 6.* 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերի ու հարցատոմսերի, ժամանակացույցի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց 120-200 դասաժամ բացականեր ունեցող աշակերտների հետ կապված կարգը: Նշեց, որ ըստ առարկաների ուսուցիչների կողմից կազնվել են հարցաշարեր, հարցատոմսեր, ստուգողական աշխատանքներ, թեստային առաջադրանքներ: Բոլոր կազմած աշխատանքներն ընդգրկում են ամբողջ ուսումնական տարվա նյութը: Զեկուցողը նշեց նաև, որ կազմվել է ժամանակացույցը, հավելելով, որ 2022-2023 ուսումնական տարում դպրոցում առկա է 120-200 դասաժամ բացակայություն ունեցող միայն մեկ աշակերտ. 8-րդ «Գ» դասարան, Աղաբեկյան Արտակ Տիգրանի:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետում, կարգին համաձայն, կազմակերպել աշխատանքները, ինչպես նաև կարևորեց, որ բոլոր հարցատոմսերը կազմված լինեն 8-րդ դասարանի ամբողջ նյութից և ապահովված լինի եռամակարդակը:

*Որոշեցին՝* Հաստատել 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը (կցվում է):

*Լսեցին 7.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված ընթացիկ թերությունները, շեշտելով, որ որոշ ուսուցիչների մոտ դիտարկվում է գնահատականների սակավություն, խնդրեց, որ ժամանակին կատարեն գրանցումները, գնահատումները:

*Արտահայտվեցին՝* Ս.Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մաս:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին 8.* 2023-2024 ուսումնական տարվա արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի առաջարկությամբ 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում արդեն իսկ խմբակներն իրականացվել են դրանց համար կազմված ծրագրերով, հավելեց, որ 2022-2023 ուսումնական տարվա համար ուսուցիչների կողմից կազմվել, հաստատվել են խմբակների ծրագրերը, որոնք ուղարկվել են ԿԳՄՍ՝ երաշխավորության, և դրանց գերակշիռ մասը երաշխավորվել են: Զեկուցողը նշեց, որ 2023-2024

ուսումնական տարվա ընթացքում ներդնելու նպատակով ուսուցիչների կողմից կազմվել են արտադասարանական խմբակների նոր ծրագրեր: Այդ ծրագրերն են՝ «Տեղեկատվության անվտանգություն և մեդիագրագիտություն», «Հմուտ ձեռքեր», ինչպես նաև մասնակի «Խոսքի զարգացում»:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ ներկայացված բոլոր ծրագրերն անհրաժեշտ է քննարկել, ուշադրություն դարձնել դրանց համապատասխանությանը հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգին:

*Որոշեցին՝* Հավանության արժանացնել ներկայացված արտադասարանական խմբակների ծրագրերը և հաստատման նպատակով քննարկել մանկավարժական խորհրդի նիստում (խմբակների ծրագրերը կցվում են էլեկտրոնային տարբերակով):

*Լսեցին՝ 9.* ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Ա» դասարանի աշակերտ Վահե Մինասյանի և 9-րդ «Բ» դասարանի աշակերտուհի Եվա Ջաղայանի ծնողները դիմումներ են ներկայացրել, որոնցով խնդրել են իրենց երեխաներին ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ Վահե Մինասյանի և Եվա Ջաղայանի ծնողների դիմումի համաձայն վերոնշյալ աշակերտներին պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

*Որոշեցին՝* Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ 9-րդ դասարանների ԿԱՊԿՈՒ ներքոնշյալ աշակերտներին՝ Վահե Մինասյանին և Եվա Ջաղայանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

*Լսեցին՝ 10.* Բնագիտամաթեմատիկական առարկաների առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների կատարողականի ստուգման արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ էլեկտրոնային դասամատյանների ստուգման արդյունքներն այս պահին բավարար են: Առարկայական ծրագրերի համապատասխան կազմված թեմատիկ պլաններում նախատեսված թեմաներն ուսուցանվել են, թեմատիկ ու գործնական աշխատանքները տրվել են, ժամանակային առումով որոշակի փոփոխություններ են նկատվել, որոնք արձանագրվել են նախորդ նիստերում:

*Արտահայտվեցին՝* Ա. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ նկատվել են դեպքեր, երբ թեմատիկ գրավոր աշխատանքն ու գործնական աշխատանքն ՕԹՊ-ով սահմանված ժամկետներում չեն տրվում: Նշեց, որ նման խնդիր արձանագրվել է նաև 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ու հորդորեց այլևս ՕԹՊ-ից շեղումներ թույլ չտալ, իսկ անհրաժեշտության դեպքում փոփոխություններ իրականացնել մեթոդմիավորման նիստում քննարկելուց հետո:

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների կատարողականի ստուգման արդյունքներն ի գիտություն ընդունել:

| | | |
|---|---|---|
| Մ/Մ նախագահ՝ | ______________________ | Ա.Դաջունց |
| Ուսումնական գծով փոխտնօրեն՝ | ______________________ | Ս. Ավանեսյան |

ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈւԹՅՈւՆ № 11

«21» հունիս 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Անուշ Դաջունց (մ/մ նախագահ)
2. Սիրուշ Բաղդասարյան
3. Արփինե Մարտիրոսյան
4. Ալլա Զեյնալյան
5. Հերմինե Ալավերդյան
6. Օլյա Ղուլյան
7. Արմանուշ Բակունց
8. Մերի Մկրտչյան
9. Մարինե Բաբայան
10. Մարետա Հարությունյան
11. Կարինե Արզումանյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, բնագիտամաթեմատիկական ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, կաբինետների վարիչներ**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

3. 9-րդ դասարանների բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

4. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

5. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս միջոցառումների կատարողականի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

6. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբի խմբակների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

7. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

8. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

9. Մեթոդմիավորման կազմի փոփոխություն:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

10. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքներն ու խնդիրները:

(զեկուցողներ ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

11. 2023-2024 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցումը նոր չափորոշիչներով է իրականացվելու:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

12. 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաշխում:

(զեկուցողներ՝ Ա. Դաչունց, Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգի կետերը:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգում նշված հարցերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման մասին:

(զեկուցող՝ Ա. Դաչունց)

Զեկուցողը նշեց, նախորդ նիստում ընդունված որոշումները սահմանված ժամկետներում կատարվել են:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստերի որոշումների կատարման մասին զեկուցումը ընդունել ի գիտություն:

*Լսեցին 3.* 9-րդ դասարանների բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների արդյունքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց 9-րդ դասարանների բնագիտամաթեմատիկական առարկաների քննությունների արդյունքների մասին: Բնագիտական առարկաներից քննություն են հանձնել՝ «Կենսաբանություն»՝ 33 աշակերտ, «Աշխարհագրություն» 28 աշակերտ, «Քիմիա»՝ 1 աշակերտ: 2022-2023 ուսումնական տարում «Ֆիզիկա» առարկայից քննություն հանձնողներ չեն եղել: «Մաթեմատիկա» առարկան քանի որ պարտադիր քննական է, քննություն են հանձնել 9րդ «Ա» և «Բ» դասարանների բոլոր աշակարտները:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ա. Մարտիրոսյանը, Մ. Բաբայանը:

Արտահայտվողները կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները: 2023-2024 ուսումնական տարում ավարտական քննությունները բարձր մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել բանավոր խոսքը զարգացնելու, լեզվական գրագիտությունը ավելացնելու և աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ երկու կիսամյակների ըմթացքում կատարված ստուգումները, ամենշաբաթյա վերահսկողությունը, փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից աջակցությունը, քննարկումները և հարցերի պարզաբանումները փոփոխություններ են արձանագրել էլեկտրոնային մատենավարության հարցում:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Որոշակի խնդիրներ կարելի է ասել հաղթահարվեցին՝ գրանցումներն ու գնահատումները կատարվեցին թեթևակի շեղումներով: Սակայն, որոշ շարունակում եմ թերություններով աշխատել, որոնք հիմնականում կապված են թեմաների ուշ լրացման, հաստատված ՕԹՊ-ներից որոշակի շեղումների հետ, սակայն շեշտեց, որ ի տարբերություն 2021-2022 ուսումնական տարվա և 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի, 2-րդ կիսամյակում արձանագրված թերություններն ու բացթողումները համեմատաբար քիչ են:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա էլեկտրոնային մատենավարության վարման արդյունքները և այն համարել բավարար:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական տարվա սկզբում բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման հոկտեմբերի նիստում կազմվել է բաց դասերի և բաց դաս միջոցառումների պլան: Այդ պլանով նախատեսված աշխատանքներն իրականացվել են, իրակացվել են նաև այլ միջոցառումներ: «Աստղագիտություն» առարկային նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն առաջացնելու նպատակով կազմակերպվել է հանդիպում Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանի հետ: ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցները Հայ օգնության ֆոնդի աջակցությամբ ամեն տարի այցելում են ՀՀ մարզերի դպրոցներ՝ հանդիպելու

աստղագիտությամբ հետաքրքրվող աշակերտների հետ։ Աշակերտները բավականին ակտիվ էին և հետաքրքրված աստղագիտությամբ, ինչը նաև փաստեց Արեգ Միքայելյանը։ Հանդիպումը տևեց նախատեսվածից ավելի երկար, քանի որ աշակերտները շատ հարցեր ունեին, իսկ Արեգ Միքայելյանը մանրակրկիտ պատասխանում էր աշակերտների հուզող հարցերին։

8-րդ[ա] և 8-րդ[բ] դասարանների աշակերտները «Ֆրանսերեն», «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներից փորձնական ինտեգրված նախագծային աշխատանք են իրականցրել «Ֆրանսիական օծանելիք» թեմայով, ստացել ու ներկայացրել են օծանելիքը։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Մ. Հարությունյանը

Ս. Ավանեսյանը նշեց, որ ցուցադրական դասերը պետք է լինեն ծրագրավորված, ուսուցիչը պետք է հաշվի առնի դասի ընթացքի հնարավոր տարբերակները, բայց ոչ երբեք նույն դասը արդեն նախապես անցկացրած լինի և դա բազում փորձերի վրա հիմնված դաս-շոուի վերածվի։ Նշեց, որ պետք է հետևել հաստատված նվազագույն պահանջներին և համապատասխան այդ ցանկի ապահովել բաց դասերի,դաս միջոցառումների կատարողականը։

Մ. Հարությունյանը կարևորեց աշակերտների պատրաստականությունը, քանի որ նրանցից է կախված դասի հաջողությունը, արդյունավետությունը։ Ուսուցիչը ուղղորդողի դեր է կատարում և զարգացնում է դասապրոցեսը։ Նա պետք է պատրաստ լինի անակնկալ շրջադարձերի և խրախուսի աշակերտների ազատ,անկաշկանդ մտածողությունը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը (կցվում է)։

*Լսեցին 6.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբի խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքից հիմնականում գոհ է, սակայն նշեց, որ եղել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ խմբակները սահմանված օրերում չեն իրականացրել։ Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը, նշեց, որ և՛ ընթացքում, և՛ ամփոփման ժամանակ արձանագրվել են թերություններ։

Խմբավարներն առանձին-առանձին ներկայացրեցին 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները՝ հաշվետվությունների տեսքով։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյան, խմբավարները

Ս. Ավանեսյանը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն։

Խմբավարների կողմից նշվեց նաև, որ խմբակների աշխատանքների վրա բացասաբար է անդրադառնում այն, որ խմբակին պետք է մասնակցեն 7-րդ ժամից հետո։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը։

*Լսեցին 7.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

Մեթոդմիան նախագահը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:

Մեթոդմիավորման անդամները ներկայացրին իրենց հաշվետվությունները, ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ամփոփեցին արդյունքները: Առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկվեցին: Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքները:

*Արտահայտվեցին՝* Կ. Արզումանյանը, Օլ. Ղուլյանը

Արտահայտվողները կարևորեցին ծավալված քննարկումները և մեթոդմիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ, ուսուցչի օգնական կապը: Նշվեցին տարվա ընթացքում առաջացած խնդիրները կապված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

*Լսեցին 8.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Դաջունց)

Զեկուցողը նշեց, որ դասալսումը մեթոդմիավորման կարևոր աշխատանքներից մեկն է: Դասալսումները կատարվել են ուսումնական գծով փոխտնօրենի, մ/մ նախագահի կողմից, ինչպես նաև կատարվել են փոխադարձ դասալսումներ: Դասալսումները ուղղված են դասապրոցեսի կատարելագործմանը, նոր մանկավարժական մեթոդների ներդրմանը, ուսուցիչների միջև փորձի փոխանակմանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները, կարևորեց քննարկված արձանագրությունների արդյունքները:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ դասալսումներն ու կազմակերպված քննարկումները օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը:

Առանձնահատուկ շեշտվեց, որ բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման ժամանակ ավելի շատ լաբորատոր դիդակտիկ նյութեր և սարքավորումներ են անհրաժեշտ, դրանց սակավությունից դասապրոցեսը տուժում է:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 9.* Մեթոդմիավորման կազմի փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից նպատակահարմար է Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմում ընդգրկված «Շախմատ», «Թվային գիտություն և համակարգչային գրագիտություն» առարկաները տեղափոխել Բնագիտամաթեմատիկական առարկաների

մեթոդմիավորման ենթակայության, որպեսզի նոր ՀՊՉ-ների բնագավառների համապատասխան առարկաները բաժանված լինեն բնագավառներին համապատասխան, Տարրական դասարանների մեթոդմիավորումում մնան միայն դասվարների կողմից դասավանդվող առարկաները, ինչպես նաև վերոնշյալ առարկաների ուսուցիչների աշխատանքները կազմակերպվեն համակարգված և ղեկավարվեն 1 մեթոդմիավորման նախագահի կողմից:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նման մոտեցումը ողջունելի է, հավելեցին, որ նախկինում նույնպես Տարրական դասարանների մեթոդմիավորումում եղել են միայն դասվարները:

*Որոշեցին՝* Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմում ընդգրկված «Շախմատ», «Թվային գիտություն և համակարգչային գրագիտություն» առարկաները տեղափոխել Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ենթակայության:

*Լսեցին 10.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

Զեկուցողները բոլորի ուշադրությունը հրավիրեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վրա: Ծատրյանը ներկայացրեց երեխաներից որոշների մոտ առաջացած խնդիրները և կատարված աշխատանքները: Քննարկվեցին տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: Արփինե Ծատրյանը նշեց, որ ուսուցիչների կողմից պատշաճ լրացվել են ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ները, ինչպես նաև ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում Ավանեսյանի կողմից մշակված դիտարկման թերթիկներով դպրոցի բոլոր դասարաններում իրականացվել են դիտարկումներ և աշակերտների մոտ խնդիրների առկայության դեպքում ուսուցիչների և ուսուցչի օգնականների հետ համատեղ իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող յուրաքանչյուր աշխատանք, նշեցին, որ այն պետք է լինի շարունակական:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների մասին զեկուցումը:

*Լսեցին 11.* 2023-2024 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցումը նոր չափորոշիչներով իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023 թվականի ապրիլի 25-ից Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում մեկնարկել են «Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների, փոխտնօրենների ու ուսուցիչների վերապատրաստում և մենթորների կողմից աջակցության իրականացում» դասընթացները, որոնց մասնակցել են նաև դպրոցի մանկավարժները: 2023-2024 ուսումնական տարվանից դպրոցի 5-րդ, 7-րդ դասարաններում ուսուցումն իրականացվելու է նոր չափորոշիչներով, հետևաբար անհրաժեշտ է ժամանակին նախապատրաստվել նոր ուսումնական տարվան, հիմք ընդունելով նոր ՀՊՉ-ն ու առարկայական ծրագրերը, կազմել նոր թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները, քանի որ արձակուրդից հետո

հաշված օրեր կմնան և այդ ընթացքում դժվար կլինի իրականացնել բոլոր նախատեսվող աշխատանքները:

*Արտահայտվեցին՝* Ա. Ջեյնալյանը

Ա. Ջեյնալյանը նշեց, որ որպես ԿԶՆԱԿԻ-ի մասնագետների կողմից վերապատրաստված ուսուցիչ պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* 2023-2024 ուսումնական տարվանն ընդառաջ սկսել թեմատիկ պլանների և օրացուցային-թեմատիկ պլանների մշակման, ինչպես նաև թեմատիկ գրավորների աշխատանքները:

*Լսեցին 12.* 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Դաջունց, Ս. Ավանեսյան)

Անուշ Դաջունցը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում կրթական համակարգում տեղի կունենան որոշ փոփոխություններ: 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում ուսուցումը կիրականացվի նոր փոփոխված հանրակրթական պետական չափորոշիչներով (ՀՊՉ): Այդ փոփոխություններին համապատասխան որոշ առարկաների ժամաքանակներ կփոփոխվեն:

«Ինֆորմատիկա» առարկան (ԹԳՀԳ) կսկսեն ուսումնասիրել 2-րդ դասարանից:

2023-2024 ուսումնական տարում ԹԳՀԳ կանցնեն նաև 5-րդ դասարանում:

«Տեխնոլոգիա» առարկան կանցնեն 1-6-րդ դասարաններում:

«Քիմիա» առարկան 7-րդ դասարանում 51 ժամից կդառնա 68 ժամ:

Սերգեյ Ավանեսյանը հանգամանալից ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները որոնք սպասվում են նոր ուսումնական տարում՝ կապված նոր չափորոշչային պահանջների հետ, հավելեց, որ 2023-2024 ուսումնական տարում 6-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում նախնական ժամաբաժանումը պետք է իրականացվի հին չափորոշիչներով, իսկ 5-րդ և 7-րդ դասարաններում՝ նոր չափորոշիչներով, համապատասխան որի որոշ առարկաների ժամաքանակի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ:

*Արտահայտվեցին՝* Ա. Ջեյնալյանը, Ա. Մարտիրոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաշվի առնել 5-րդ և 7-րդ դասարաններում սպասվող փոփոխությունները՝ կապված բնագիտամաթեմատիկական առարկաների առարկայական փոփոխությունների հետ: Ա. Ջեյնալյանը նշեց, որ որպես ԿԶՆԱԿԻ-ի մասնագետների կողմից վերապատրաստված ուսուցիչ պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____________________ Ա. Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ _____________________ Ս. Ավանեսյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման**

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում *Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *11 հերթական նիստ*, որոնց համար կազմվել է *11 արձանագրություն։*

*Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման* նիստերի տվյալները՝ ստորև.

| № | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ | ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | 25.08.2022թ. | 7 |
| 2 | 2 | 23.09.2022թ. | 6 |
| 3 | 3 | 28.10.2022թ. | 7 |
| 4 | 4 | 23.11.2022թ. | 4 |
| 5 | 5 | 26.12.2022թ. | 6 |
| 6 | 6 | 04.01.2023թ. | 4 |
| 7 | 7 | 08.02.2023թ. | 4 |
| 8 | 8 | 09.03.2023թ. | 5 |
| 9 | 9 | 21.04.2023թ. | 5 |
| 10 | 10 | 10.05.2023թ. | 10 |
| 11 | 11 | 21.06.2023թ. | 12 |

*Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման* սույն արձանագրությունների մատյանը կազմված է *39* էջից։

Մ/Մ նախագահ՝ ______________________ Ա. Դաջունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

«21» հունիսի 2023թ.